

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Ի Թ Յ Ո Ւ Ն № 1

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2017թ. հունվարի 31-ին կայացած նիստի

Նախագահությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
Քարտուղարությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
Մասնակցությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի աշխատանքների արդյունքների ամփոփում:
Ձեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան:
2. Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտներ Սիրարփի Արշակյանի և Ռուզաննա Աբրահամյանի, քաղաքագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մանե Աթիկյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատում և գիտական ղեկավարների նշանակում:
Ձեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան:
3. Ընթացիկ հարց: Հանրային կառավարման ամբիոնի վերանվանման հարցը:
Ձեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան:
4. Ընթացիկ հարց: «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» ծրագրի շրջանակներում ծրագրի խորհրդատուների կողմից մշակված հեռավար կրթության իրականացումը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի հաստատման հարցը:
Ձեկուցող՝ պրոռեկտոր Թ.Խեչոյան:

1. Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի աշխատանքների արդյունքների ամփոփման հարցը:

Ձեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ.Գսպոյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի աշխատանքների արդյունքներն ընդունել ի գիտություն (հաշվետվությունը կից ներկայացվում է):

2. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտներ Սիրարփի Արշակյանի և Ռուզաննա Աբրահամյանի, քաղաքագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մանե Աթիկյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:

Ձեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան:

Ձեկուցողը նշեց, որ 1. Քաղաքագիտության ամբիոնում 2017թ. հունվարի 10-ին քննարկվել է հեռակա ուսուցման ասպիրանտ Մանե Աթիկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին Մանե Կամոյի Աթիկյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Կուսակցական լիդերի գաղափարական կողմնորոշումների դերը Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգի արդիականացման գործընթացում» վերտառությամբ՝ ԻԳ.00.02 մասնագիտությամբ և հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մամիկոնի Մարգարյանին:

2. Իրավագիտության ամբիոնում 2017 թվականի հունվարի 27-ին կայացած նիստում քննարկվել է իրավագիտության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտներ Սիրարփի Արշակյանի և Ռուզաննա Աբրահամյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը և նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին՝

1) Ռուզաննա Լևոնի Աբրահամյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Համաչափության սահմանադրական սկզբունքի պահպանման առանձնահատկությունները վարչական վարույթում և վարչարարությունում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավագիտության թեկնածու, դոցենտ՝ Վարդան Նորիկի Այվազյանին:

2) Սիրարփի Միսակի Արշակյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Չծնված երեխայի իրավունքների պաշտպանությունը սահմանադրական ժամանակակից զարգացումների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Աշոտ Հայկի Խաչատրյանին:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Մ.Մարգարյանը, Ա.Եզեկյանը:

Որոշեցին՝

1. **Մանե Կամոյի Աթիկյանի** թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Կուսակցական լիդերի գաղափարական կողմնորոշումների դերը Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգի արդիականացման գործընթացում» վերտառությամբ՝ ԻԳ.00.02 մասնագիտությամբ և հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մամիկոնի Մարգարյանին:

2. 1) **Ռուզաննա Լևոնի Աբրահամյանի** թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Համաչափության սահմանադրական սկզբունքի պահպանման առանձնահատկությունները վարչական վարույթում և վարչարարությունում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավագիտության թեկնածու, դոցենտ՝ Վարդան Նորիկի Այվազյանին:

2) **Սիրարփի Միսակի Արշակյանի** թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Զծնված երեխայի իրավունքների պաշտպանությունը սահմանադրական ժամանակակից զարգացումների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Աշոտ Հայկի Խաչատրյանին:

3. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Հանրային կառավարման ամբիոնի վերանվանման հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Զատինյան:

Պրոռեկտոր Զատինյանը ներկայացրեց, որ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հանրային կառավարման ամբիոնի ձևավորման պատմությունը սկսվել է 2002 թվականից, երբ գործող երկու՝ «Պետական կառավարման կազմակերպման հիմունքներ» և «Կառավարման տնտեսության հիմունքներ», կրթաբլոկների միացման արդյունքում 2002 թվականին հիմնադրվել է վերջինս: 2006 թվականին, ժամանակի պահանջին համապատասխան այն վերակազմակերպվել է «Հանրային կառավարման և հանրային ֆինանսների» ամբիոնի, այնուհետև 2015 թվականին ամբիոնը վերանվանվել է «Հանրային կառավարում»:

Հիմք ընդունելով արտասահմանյան և տեղական բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան ոլորտի փորձի ուսումնասիրությունը, ինչպես

նան հաշվի առնելով Ակադեմիայի առաքելությունը, ռազմավարությունը և զարգացման հեռանկարները, նոր կրթական ծրագրերի ներդրման հնարավորությունն ու անհրաժեշտությունը, ամբիոնի խնդիրներն ու նպատակները (մագիստրանտների, ասպիրանտների, հայցորդների որակյալ ուսուցման և պաշտոնական առաջխաղացման հնարավորության բարձրացում, մենեջմենթի և հանրային կառավարման ոլորտներում մասնագիտական բարձր կարողունակության և գիտելիքների ապահովում) ինչպես նաև ՀՀ տնտեսության զարգացման հեռանկարներն ու վարվող տնտեսական քաղաքականությունը, Հանրային կառավարման ամբիոնը 23 հունվարի 2017թ. կայացած նիստի որոշմամբ առաջարկում է «Հանրային կառավարում» ամբիոնը վերանվանել «Կառավարում» ամբիոնի՝ պահպանելով վերջինիս նպատակներն ու խնդիրները:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Խ.Բեգիբջյանը, Գ.Չատինյանը, Գ.Գսպոյանը:

Որոշեցին՝ «Հանրային կառավարում» ամբիոնը վերանվանել «Կառավարում»:

4. Լսեցին՝ Ընթացիկ հարց: «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» ծրագրի շրջանակներում ծրագրի խորհրդատուների կողմից մշակված հեռավար կրթության իրականացումը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի հաստատման հարցը:

Ձեկուցող՝ պրոռեկտոր Թ.Խեչոյան:

Ձեկուցողը ներկայացրեց և առաջարկեց հաստատել «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» ծրագրի շրջանակներում ծրագրի խորհրդատուների կողմից մշակված հեռավար կրթության իրականացումը կարգավորող հետևյալ նորմատիվ իրավական ակտերը՝

1. Հեռավար ուսուցման (կրթության) իրականացման մեթոդաբանական ուղեցույց
2. Հեռավար ուսուցման (կրթության) գործընթացի կազմակերպման կարգ
3. Հեռավար ուսուցման հարթակի տեղեկատվական բազայի օգտագործման կարգ
4. Հեռավար ուսուցման (կրթության) որակի ապահովման ներբուհական չափանիշները:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Թ.Խեչոյանը, Խ.Բեգիբջյանը:

Որոշեցին՝ Հաստատել «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» ծրագրի շրջանակներում ծրագրի խորհրդատուների կողմից մշակված

հեռավար կրթության իրականացումը կարգավորող հետևյալ նորմատիվ իրավական ակտերը՝

1. Հեռավար ուսուցման (կրթության) իրականացման մեթոդաբանական ուղեցույց
2. Հեռավար ուսուցման (կրթության) գործընթացի կազմակերպման կարգ
3. Հեռավար ուսուցման հարթակի տեղեկատվական բազայի օգտագործման կարգ
4. Հեռավար ուսուցման (կրթության) որակի ապահովման ներբուհական չափանիշները:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան
31 հունվարի 2017թ.

Կ.Տ.